Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 251 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԻՆՖԵԿՑԻՈՆ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Բնակչությանը բշժկական ծառայությունների մատուցման պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է վերակառուցել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնքի ք. Նոյեմբերյան «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ինֆեկցիոն մասնաշենքը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնք, քաղ. Նոյեմբերյան, առողջապահություն
6.	Ծրագրի բյուջեն	87,443,471 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	«Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի ապրիլի 17-ից մինչև 2024 թվականի փետրվարի 19-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնքի ք. Նոյեմբերյան «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ինֆեկցիոն մասնաշենքի վերակառուցում՝ 87,443,471 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի ապրիլի 17-ից մինչև 2024 թվականի փետրվարի 19-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ինֆեկցիոն մասնաշենքում նախատեսվում է շենքի սեյսմազինվածության ավելացում, հիմքերի ուժեղացում: Կատարվելու է շենքի ներքին հարդարման, ներքին ջրամատակարարման և ջրահեռացման, էլեկտրականության և հրդեհային անվտանգության համակարգերի տեղադրման, ջեռուցման և օդափոխության համակարգերի սարքավորումների տեղադրման, դռների, պատուհանների և հատակների փոխարինման աշխատանքների իրականացում, ինչպես նաև փոխվելու է տանիքը և կատարվելու է շենքի արտաքին հարդարման աշխատանքներ՝ 87,443,471 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ Տավուշի մարզպետարան, Նոյեմբերյանի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

05.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ